Հավելված N 9
ՀՀ տնտեսական զարգացման և
ներդրումների նախարարի
2018 թվականի հունիսի 29-ի
N 481-Ա հրամանի

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԵՎՏՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Առևտրի համաշխարհային կազմակերպության հետ համագործակցության վարչությունը (այսուհետ՝ վարչություն) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության (այսուհետ՝ նախարարություն) հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում և իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության, նախարարության կանոնադրության, Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի հրամանների, ինչպես նաև սույն կանոնադրության պահանջներին համապատասխան:

2. Վարչությունն իր իրավասությունների շրջանակներում պատասխանատվություն է կրում իր առջև դրված խնդիրների և գործառույթների ժամանակին ու պատշաճ իրականացման համար:

3. Վարչության կանոնադրությունը հաստատում, փոփոխում և ուժը կորցրած է ճանաչում նախարարը՝ նախարարության գլխավոր քարտուղարի ներկայացմամբ՝ նախապես համաձայնեցնելով վարչության պետի և համակարգող պաշտոնատար անձի հետ:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

4. Վարչության հիմնական խնդիրներն են՝

1) Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) հետ համագործակցության ապահովումը.

2) ԱՀԿ համաձայնագրերի դրույթներով սահմանված, ինչպես նաև ԱՀԿ անդամակցությամբ Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների կատարման ապահովման ուղղությամբ աշխատանքների իրականացումը.

3) ԱՀԿ համաձայնագրերով սահմանված ծանուցման պարտավորությունների իրականացման ապահովում՝ որպես Հայաստանի Հանրապետության ծանուցումների պատասխանատու մարմին.

4) Հայաստանի տարածաշրջանային ինտեգրման գործընթացների շրջանակներում իրականացվող աշխատանքների և մշակվող փաստաթղթերի՝ ԱՀԿ համաձայնագրերի պահանջներին համապատասխանության ապահովումը.

5) ԱՀԿ հետ համագործակցությունից և (կամ) անդամակցությունից բխող առևտրատնտեսական պարտավորությունների կատարումը.

6) Հայաստանի Հանրապետության առևտրատնտեսական հարաբերությունները կարգավորող օրենսդրական դաշտի՝ ԱՀԿ համաձայնագրերի դրույթներին համապատասխանեցման ապահովման աշխատանքների իրականացում:

V. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

10. Վարչության գործառույթներն են.

1) Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) հետ համագործակցության ապահովում.

2) Հայաստանի Հանրապետության առևտրատնտեսական հարաբերությունները կարգավորող օրենսդրական դաշտի՝ ԱՀԿ համաձայնագրերի դրույթներին համապատասխանեցման ապահովման աշխատանքների իրականացում.

3) Հայաստանի Հանրապետություն - Եվրոպական Միություն «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի»՝ առևտրին

առնչվող դրույթների իրականացման աշխատանքների և համապատասխան ճանապարհային քարտեզի իրականացման շրջանակներում ամրագրված ԱՀԿ համաձայնագրերի դրույթներին և Հայաստանի Հանրապետության ստանձնած ԱՀԿ պարտավորություններին համապատասխանեցման ապահովում.

4) ԱՀԿ համաձայնագրերի դրույթներով սահմանված, ինչպես նաև ԱՀԿ անդամակցությամբ ՀՀ ստանձնած պարտավորությունների կատարման ապահովման ուղղությամբ աշխատանքների իրականացում.

5) ԱՀԿ համաձայնագրերով սահմանված ծանուցման պարտավորությունների իրականացման ապահովում՝ որպես Հայաստանի Հանրապետության ծանուցումների պատասխանատու մարմին.

6) ԵԱՏՄ շրջանակներում ձեռք բերված պայմանավորվածությունների հիման վրա՝ ԱՀԿ միասնական ծանուցումների ձևավորման նպատակով գործընթացների ապահովում և ՀՀ համապատասխան ծանուցումների ներկայացում.

7) ԱՀԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցչի հետ համագործակցության և նրա գործունեության դիտանցման ապահովում.

8) ԱՀԿ քարտուղարությունում գործող ոլորտային և առևտրային հանձնաժողովների և կոմիտեների աշխատանքներին և այդ շրջանակներում իրականացվող ծրագրերին ՀՀ մասնակցության ապահովում, ՀՀ դիրքորոշումների ներկայացում.

9) ԱՀԿ շրջանակներում ՀՀ ամրագրված սահմանային մաքատուրքերի դրույքաչափերի պարտավորությունների բանակցային գործթընացի իրականացման ապահովում.

10) ԱՀԿ համաձայնագրերի դրույթների ներքո ԱՀԿ քարտուղարության կողմից ՀՀ առևտրային քաղաքականության վերաքննության գործընթացի իրականացման շրջանակներում ժամանակացույցով սահմանված գործընթացների ապահովում.

11) Հայաստանի տարածաշրջանային ինտեգրման գործընթացների շրջանակներում իրականացվող աշխատանքների և մշակվող փաստաթղթերի՝

ԱՀԿ համաձայնագրերի դրույթներին և Հայաստանի Հանրապետության ստանձնած ԱՀԿ պարտավորություններին համապատասխանեցման ապահովում.

12) մասնակցություն ԵԱՏՄ-ի շրջանակներում ընթացող առևտրային բնույթի համաձայնագրերի բանակցություններին և փորձաքննություններին՝ ԱՀԿ սկզբունքների և մոտեցումների ապահովման նպատակով.

13) ԱՀԿ շրջանակներում անդամ երկրների միջև ընթացող բազմակողմ բանակցային գործընթացներին մասնակցության ապահովում, Հայաստանի Հանրապետության շահերի ներկայացում.

14) ԱՀԿ շրջանակներում Հայաստանի Հանրապետության պարտավորությունների ապահովման նպատակով ընթացող բանակցային գործընթացների իրականացման համակարգում, անհրաժեշտ բանակցային փաստաթղթերի և դիրքորոշումների ձևավորում.

15) ՄԱԿ-ի առևտրային և տնտեսական կառույցների և մարմինների հետ (UNECE, UNCITRAL, UNCTAD, UNESCAP, UN ITC և այլն) համագործակցության աշխատանքների իրականացում.

16) Եվրոպական Միության և այլ երկրների կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող արտոնյալ առևտրային ռեժիմների արդյունավետ իրականացնման և դիտանցման շրջանակներում ԱՀԿ համաձայնագրերի դրույթների և ՀՀ պարտավորությունների համապատասխանեցման ապահովում.

17) բարենպաստ առևտրային ռեժիմների ձևավորման և արտաքին շուկաներ մուտք գործելու խոչընդոտների վերացման ուղղությամբ միջոցառումների իրականցման ուղղությամբ ԱՀԿ դրույթների ապահովում:

III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

6. Վարչության կառուցվածքն ու հաստիքային ցուցակը հաստատում է նախարարը՝ նախարարության գլխավոր քարտուղարի ներկայացմամբ՝ նախապես համաձայնեցնելով վարչության պետի և համակարգող պաշտոնատար անձի հետ:

7. Վարչությունը՝

1) իր իրավասության շրջանակներում կազմակերպում և իրականացնում է աշխատանքներ՝ համագործակցելով նախարարության այլ ստորաբաժանումների, Հայաստանի Հանրապետության շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների հետ.

2) ներկայացնում է հաստատման վարչության ծրագրերը, ինչպես նաև ապահովում է դրանց կատարումը:

8. Վարչության աշխատանքների ղեկավարումն իրականացվում է վարչության պետի կողմից:

9. Վարչության պետը՝

1) իրականացնում է վարչության աշխատանքների կազմակերպումը և ընդհանուր ղեկավարումը.

2) պատասխանատու է վարչությունում համապատասխան աշխատանքային մթնոլորտի և կարգապահության ապահովման, վարչությունում աշխատողների միջև աշխատանքային հավասարաչափ բաշխման և դրանց կատարման համար.

3) բացահայտում, վերլուծում և գնահատում է վարչության առջև դրված գործառույթներից բխող մասնագիտական նշանակության խնդիրներ, ինչպես նաև դրանց տալիս է ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ կամ ապահովում այդ աշխատանքների կատարումը.

4) անմիջական հաշվետու է նախարարին: